

338.1

K-58

ԲԵՐՔԻ ՈՒ ԿՈՆԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՐԸ

ՅԵՎ

ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԻՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 47
ԳՐԱՌԵՊՎԼԽՎԱՐ 5858 (բ)
ՏԻՐԱԺ 5000

1. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԲԵՐՔԻ ՏՈՆՆ ԱՌԱՋՆԵՐՈՒՄ

Արդեն ութերորդ տարին է, վոր Խորհրդային Հայաստանում տոնվում է Բերքի և Կոլեկտիվացման ուրը: Առաջներում կոչվում եր միայն բերքի տոն, իսկ յերկրորդ տարին է, ինչ կոչվում է Բերքի և Կոլեկտիվացման ուրը: Բերքի և Կոլեկտիվացման ուրը՝ դա Խորհրդային իշխանության ուրոք հիմնված աշխատավորության տոնն է: Մինչև խորհրդայնացումն այդպիսի տոն չի յեղել: Դրա փոխարեն զանազան գույնի կղերականները հիմնված աշխատավոր գյուղացիության տրգիտության և տնտեսական ստրկության վրա ստեղծել էին բազմաթիվ «սուրբ աստվածածնի», «սուրբ խաչի» և այլն սրբերի տոներ և ուխտեր: Այդ ուխտերին և տոներին հիմնված աշխատավոր գյուղացիության տգիտության վրա յեկեղեցական խաբեբաները հազարներ էին

կորդում ուխտագնացութիւններէց, վատ-
թարացնելով աշխ. գյուղացիութեան
տնտեսական դրութիւնը, կազմակերպե-
լով կռիւի և հարբեցողութեան շարաթներ:
Անհաշիվ էյին Հայաստանի զանազան
մասերում ուխտագնացութիւնները, ու-
րեմն և նրանց համար զոհեր և վատնում-
ներ, վորոնք յուրաքանչյուր տարի առ-
տիճանաբար վատթարացնում էյին աշ-
խատավոր գյուղացու տնտեսական դրու-
թիւնն ավելի ու ավելի կախման մեջ դը-
նելով գյուղի տղրուկից—կուլակից:
Բատրակը, չքավորը հաճախ իր ամբողջ
տարվա բերքը ծախսում էր ուխտատե-
ղում, հետեյալ որը վերադառնալով գյու-
ղը, կուլակին կամ կղերին ծախում էր
իր հաջորդ տարվա բերքը: Առաջներում
այդպես էր տոնում աշխատավոր գյուղա-
ցին յուր «բերքի տոնը»:

Զնայած սասը տարվա մեր հախուռն
այայբարին կուլակի և հոգեւորականու-
թեան դեմ, վորի հետեւանքով տաանյակ
յեկեղեցիներ և վանքեր այլևս վոչ թե
ուխտատեղիներ են, այլ վերածվեցին հը-

նագիտական հիմնարկների, ախուամե-
նայնիվ դեռ աշխատավորութեան մի չըն-
չին մասը կազմակերպում է ուխտագնա-
ցութիւն, ծախսելով յուր ունեցվածքի
չոչափելի մասը: Բերքի և կուլեկտիվացման
որր պայքար է աշխատավորութեան այդ
մասի տգիտութեան վերացման համար:

2. ԲԵՐՔԻ ՅԵՎ ԿՈՆԵԿՏԻՎԱՅՄԱՆ ՈՐԸ

Ինչու սահմանվեց նախ բերքի տոն,
տպա բերքի և կուլեկտիվացման որը:

Բանվորները և աշխատավոր գյուղա-
ցիները Հոկտեմբերեյան հեղափոխութիւն-
նից հետո, յերբ իշխանութիւնն իրենց
ձեռք առան, չէյին կարող ամենից առաջ
շմտածել ազատելու աշխատավորութեան
նր տգիտութիւնից, ուրեմն և հոգեւորա-
կանութեան ճանկերից, քանի վոր հոգե-
վորականութիւնը ցարական, դաշնակ-
եան իշխանութեան և գյուղի կուլակի ու
քաղաքի կապիտալիստի հետ միացած որ
ու գիշեր աշխատում էյին նրա թալանելու
գործին: Խորհրդային իշխանութեան կող-
մից չքավոր գյուղացուն տված տնտեսա-

կան և բարոյական աջակցութիւնը ամբարցնում և զարգացնում է նրա տնտեսութիւնը: Տարին մի անգամ աշխատավոր դյուղացիութիւնը պետք է հաշիւեր յուր այդ տարում ձեռք բերած հաղթանակները՝ և ահա ուխտերի և տգիտութեան դեմ պայքարելու, տնտեսութեան զարգացման շորտաւես կազմակերպելու համար սահմանված է «Բերքի տոն», հետագայում Բերքի և Կուլեկտիվացման ուրը:

Բերքի և Կուլեկտիվացման ուրը դյուղի շքավոր և միջակ մասսան, ցուցահանդեսի միջոցով հրապարակ է հանում իր աշխատանքի լավագույն արդյունքները՝ իր լավ բերքը, անասունները, թռչուններն ու պտուղները և այլն, ցույց տալով հարեւանին—թե ինչ կարելի չէ անել մի տարվա ընթացքում տնտեսութիւնը բարձրացնելու, նրա այս կամ այն ճյուղը զարգացնելու գործում:

Բերքի և Կուլեկտիվացման ուրը, քաղմակերպված ցուցահանդեսները, մրցութիւնները, ագրոնոմիական և քաղաքական գրույցներն ու դասախոսութիւններն

ըլ, ցուցադրական դատերն ու չքերթները, կինոն և ներկայացումները, դրանք աշխատավոր դյուղացիութեան կուլտուրական հառաջադիմութեան ու բարեկեցութեան ամենից լավ նշաններն են: Վոչ թե ուխտագնացութիւն, հարբեցողութիւն, ծեծ, ջարդոց, այլ տարեկան աշխատանքի կենդանի ստուգատես նախկին անիմաստ «քեֆերի» փոխարեն մրցանակ կատարած լավ աշխատանքի համար: Հարբեցողութեան փոխարեն՝ կինո, յերաժշտութիւն և ռադիո, ագիտ-դատեր և այլն:

Ութ տարիների ընթացքում Բերքի և Կուլեկտիվացման ուրը այնպիսի մասնաշաղկան ուր է դարձել, վոր այդ ուրվա առթիվ հովաքված հովաքույթներին, ընդհանուր ժողովներին, դասախոսութիւններին, գրույցներին և կազմակերպված ցուցահանդեսներին մասնակցող աշխատավոր մասսաների թիվը տասնյակ հարյուր հազարների յե հասնում:

Ահա թե ինչու սահմանվեց «Բերքի տոն»-ը:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՆԵԿՏ- ՎԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Խորհրդային իշխանութիւնը կոմ-
կուսի ղեկավարութեամբ գյուղատնտե-
սութեան զարգացման հիմքում դրել է
գյուղի կոլեկտիւացումը՝ փորձէտի
յերկրի ինդուստրիալիզացիան առաջադ-
րում է գյուղատնտեսութեան սոցիալիս-
տական վերակառուցումը—խորհրդային
և կոլեկտիւ տնտեսութիւնների ճանա-
պարհով՝ ստեղծել սոցիալիստական
արդյունաբերութեան համար ամուր բա-
ղա:

Մեր արդյունաբերութիւնն արագ-
բայելով զարգանում է, իսկ գյուղական,
տնտես տնտեսութեան զարգացման թափը
չի ապահովի աճող սոցիալիստական ար-
դյունաբերութեանը հում նյութերով:
Մեր անընդհատ բազմացող գործարաննե-
րի բանվորներին պետք է ապահովել և
հացով և՛ գյուղատնտեսական մթերքնե-
րով: Մեր գործարաններին պետք է արա-
գորեն հում նյութ մատակարարել—

բուրդ, բամբակ, կաշի և այլն: Մեր բամ-
բակի արդյունաբերութիւնն ազատել ար-
տասահմանի բամբակի կախումից հիմ-
նականում լուծելով հացի պրոբլեմը, այդ
հիման վրա լուծել նաև տնտեսադաստի-
սութեան պրոբլեմը և այլն: Այս բոլորը պա-
հանջում են, վոր մենք մեր գյուղատնտե-
սութիւնը շատ ավելի մեծ թափով զար-
գացնենք և բարձրացնենք նրա արտադրո-
ղականութիւնը, իսկ դա հնարավոր չե-
առանց գյուղի սոցիալիստական վերա-
կառուցման: Գյուղի սոցիալիստական վե-
րակառուցումը նշանակում է գյուղի
բաւորակ, չքավոր և միջակ մանր անհատ
տնտեսութիւնները միացնելով վերածել
նրանց խոշոր հանրայնացված տնտեսու-
թիւնների, այսինքն՝ կոլեկտիւ տնտե-
սութիւնների: Գյուղատնտեսութեան
հանրայնացրած այս ձևը ապահովելով
յերկրի ինդուստրիալիզացիայի թափը,
միուս կողմից գյուղի բաւորակ, չքավոր
և միջակ տարրի համար կստեղծի բարե-
կեցիկ գրութիւն, վերացնելով կուլակին
իրրե դասակարգի:

Գյուղի աշխատավոր տարրերի մե-
ծագույն մասը յեղած կոլխոզների փոր-
ձով արդեն համոզվել են, վոր կոլեկտիվ
տնտեսությունը այն ձևին է, վորտեղ
միացվում են անհատական տնտեսու-
թյունների վարելահողերը, արտերը,
խոտհարքները կենտրոնացնում մի տեղ,
ստացվում է ըստ կոլտնտեսության մեջ
մտած տնտեսությունների թվին մի հո-
ղային ամբողջություն, վորի վրա կարե-
լի յե վորոշ ցանքսաշրջանառություն կի-
րառել արդյունավետ յեղանակով, գոր-
ծադրել տրակտորը, շարքացանը, հնձող,
կալսող և այլն բարդ մեքենաներ: Կարելի
յե մի տեսակի լավ սերմացու ցանել և
ստանալ միատեսակ հունձ, ժամանակին
պարարտացնել հողամասերը, մաքրել
սերմացուն, ախտահանել, շարքով ցանել,
ժամանակին և կանոնավոր խնա-
մել ցանածը, մեկ խոսքով կիրա-
ռելով ագրո-ձեռնարկումները լրիվ, ստա-
նալ մեծ բերք, տնտեսության կարիքը
բավարարելուց հետո պետական կամ կոո-
պերատիվ մ սրմիններն վաճառել, ավել-

ցուկը ոգնելով բանվոր դասակարգին
գյուղատնտեսական մթերքներով և հում
նյութով: Մյուս կողմից գյուղական չքա-
վար և միջակ տնտեսությունները տեսնում
և շոշափում են պետության կողմից կոլ-
տնտեսություններին տրվելիք արտոնու-
թյունները, տնտեսական խոշոր ոգնու-
թյունը, վորը յուր հերթին ապահովում
է կոլտնտեսությունների արագ և ռացիո-
նալ զարգացումը:

Սրա համար է, վոր գյուղի կուլակը
ամեն տեղ ավելի յե ակտիվացել, ամեն
միջոցի դիմում է, վոր արգելք հանդիսա-
նա չքավոր և միջակ մասսաների կոլեկ-
տիվացման գործին, հերթական պրովա-
կացիաների և բամբասանքների հետ մեկ-
տեղ կազմակերպում է տնտեսական վնա-
սարարություն, ստանում կոլտնտեսա-
կան լավագույն նախագահներին, վորով-
հետև նա պարզ տեսնում է, վոր կոլեկտիվ
տնտեսությունների զարգացումը կուլակ-
ների համար գերեզման է փորում՝ համա-
տարածի շրջաններում նրան վերացնում
իրևե դասակարգի, սրա համար էլ նա տ-

վելի յե գազազում, ատամները սղմում չքավորի և միջակի հանդեպ, իսկ վերջիններս ամուր դաշինք կապած, միացած քաղաքի բանլոր դասակարգի հետ գնում են սոցիալիզմի կառուցման ուղիով քաղաքում և գյուղում:

Վորքան Բերքի և Կոլեկտիվացման որը շատանան և խոշորանան մեր կոլտնտեսությունները, այնքան ամուր կլինի մեր յերկրագործության կոլեկտիվ ձևը, այնքան շուտ և այնքան ուժեղ կլինեն գյուղի կուլակի իբրև դասակարգի վերացման համար, նրա գլխին հասցրած վերջնական հարվածները:

4. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը խորհրդային և կոլեկտիվ տրնտեսությունների ճանապարհով, այժմ չնայած աջ ուղարատնիստների դուշակություններին, դյուլական հիմնական մասսաների սեփականությունն և դարձել:

Գյուղատնտեսության կոլեկտիվ ձե-

յին Խորհրդային Իստանությունը ձեռնարկեց դեռ խորհրդայնացման հենց առաջին օրից՝ առաջադրելով լենինյան կամայոր սկզբունքը, ցուցադրական համոզման մեթոդով: Կոլտնտեսություններին ավելի հիմնավորվել և բաղմանալ սկսեցին 28 - 28 թվերին: Այժմ Միությունում կոլտնտեսությունների մեջ հաշվվում են մոտ 15 միլիոն շունչ: Տասնյակ կուլտնտեսությունների փորձերը ցույց են տվել կոլխոզից դուրս գյուղացիներին, վոր կոլեկտիվում չքավորի և միջակի շնչաթափինր ավելի մեծ է յեղել, քան անհատական տնտեսություն փարիլու ժամանակ:

Հայաստանում էլ տնտեսությունները զարգանալ են ոկսում 1927 թվից սկսած: Հետևյալ տախտակը ցույց է տալիս նրանց զարգացման աստիճանը:

Տարի	Կոլտնտեսության թիվ	Տնտեսության թիվ	Ծնյերի թիվ	Հոգերի տարածություն հեկտարներով
1927	6	846	741	1092
1928	55	1082	3987	6860
1929	178	4350	19856	25544
1930	386	17024	80012	102300
				18

Այս սոցիալական պարզ ցույց է առկա թե ինչպիսի արագութեամբ զարգանում են կոլտնտեսութեանները: Նրանց այսպիսի արագ թափն սպասովում է այս հնդամյակում ավարտելու աշխատավոր գյուղացիութեան գլխավոր կոլեկտիվացումը: Մյուս կողմից կոլտնտեսութեանների զարգացման այս թափն ապացուցում է, վոր միջակը համոզված կառույտնութեանները առավելութեանների մեջ, մասսայորեն դիմում է դեպի կոլտնտեսութեանները, կոլտնտեսութեանների ներսում բարձրագույն չքանութեանների հետ հանդիսանալով խորհրդային իշխանութեան ամուր հենարանը: Կոլտնտեսութեանների հետագա զարգացումը ապահովում է միայն և միայն միջակ գյուղացու հանրեայ դարձադրելով լեռնային կամավոր սկզբունքը, քանի վոր այս թիվի դարձան համատարած կոլեկտիվացման բնիկացում թույլ տված կուսակցական դժի շեղումներն ապահովում են ինչպիսի տանգել բանվորագյուղացիական դաշինքին, հետևապես և կոլտնտեսութեանը: Տեղերում կատարած սխալների արագ շրջ-

կումը միայն ապահովեց կոլտնտեսութեան հետագա նորմալ զարգացումը: Այժմ կոլտնտեսութեանների բերքահամարից հետո, չնայած աջ ոպորտունիստների գուշակութեաններին, վոր դարձան ձախ քայլագյուղութեաններից հետո կոլտնտեսութեանները չեն աճելու, այնուամենայնիվ գյուղացիական չքանութեանները և միջակ նորանոր մասսաներ գրում են դեպի կոլտնտեսութեանները: Բերքի և Կոլեկտիվացման ոլը կոլտնտեսութեանների աճման, յեղածների խոշորացման և նորերի կազմակերպման ոլն է: Այսօր կոլտնտեսութեանների անհատական տնտեսութեան համեմատութեամբ ունեցած առավելութեանների զորատեսը մի անգամ ևս պետք է հառատառի աշխատավոր գյուղացիութեան գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմնական և ճիշտ ուղին՝ ապահովելով նորանոր կոլտնտեսութեանների կազմակերպումը և նորերի խոշորացումը:

5. ԲԵՐԲԻ ՅԵՎ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՐԸ ՊԼ ԲԵՐԲԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՆ Ե

Գյուղատնտեսութեան զարգացման հիմնական խնդիրներից մեկն է բերքի

բարձրացումը: Բերքի և կուլեկտիվացման
որը բերքի բարձրացման միջոցները պետք
է լայն կերպով մասսայականացվեն: Գյու-
ղական հասարակական ժողովներում, ցու-
ցահանդեսներում, աշխատավոր գյուղա-
ցիություն պարզ լեզվով պետք է ասել այս
կամ այն անհատական չքավոր և միջակ
տնտեսություն, խորհրդային և կուլեկտիվ
տնտեսությունների մեջ գործադրված
բերքի բարձրացման միջոցների ու նրանց
ստացված արդյունքի մասին:

Բերքի բարձրացման միջոցները չափ
չեն, բերքի և կուլեկտիվացման որը նրանք
ավելի և ավելի պետք է գյուղի աշխատա-
վոր մասսաների սեփականությունը դառ-
նան:

Վորոնք են բերքի բարձրացման ամի-
նապարզ միջոցները՝

ա) Հողերի մշակությունը, վարն ա-
նել վոչ թե արորներով, այլ գութանով:

Ինչու յե գութանով արած վարն ավե-
լի մեծ բերք տալիս, քան արորով արա-
ծը: Բանն այն է, վոր գութանն ավելի
խորն է կտրում հողը, քան արորը, գու-

թանն իր կրծքով շուռ է տալիս հողի շեր-
տը, իսկ արորը՝ վոչ—չնորհիվ հենց այդ
յերկու ստավելությունների՝ անձրեվը,
ջուրը, ձյունը, վորոնք այնքան հարկա-
վոր են սմեն մի բույսի աճելու, զարգա-
նալու համար, մտնում ծծվում են հողի
մեջ խորը և ամբարվելով այդ տեղ ցանած
բույսին յերկար ժամանակ ջուր են տա-
լիս, այնինչ—արորով արած վարի մեջ
ջուրը չի կարողանում հողի մեջ խորը
մտնել, այնտեղ ամբարվել, դրա պատ-
ճառով ել մի քանի շաբաթվա տաք օրերը
բավական են, վորպեսզի արորով վարած
հողի մեջ ջուրը գոլորշիանա, դրա հետե-
վանքով ցանած բույսը շուտով նվազում
է, չի զարգանում և քիչ բերք է տալիս:
Հայաստանում կատարված մի շարք փոր-
ձերը ցույց են տվել, վոր գութանով արած
վարի հեկտարից ստացվել է 11—12 ցենտ-
ներ (66—72 փութ), իսկ արորով վարած
արտի մի հեկտարը տվել է ընդամենը 6—7
ցենտներ (36—42 փութ,—հաճախ ավելի
պակաս:

Պետք է տեսնել և թանկացնել թանն ունի ևս



12402-57

մի առավելություն, վոր նա իր խոփով
կտրում է մորախոտերը և դրանց հողի
տակն աննելով նախ՝ մորախոտերն են
վռնչանում, յերկրորդ՝ վոր նրանք հողի
մեջ մնալով փտում են, վորից բերքը
նույնպես ավելանում է:

բ) Հողերի պարարտացում.—Բերքի
բարձրացման խնդրում պարարտացումը
ամենապիտալոր տեղն է բռնում: Նկատ-
ված է, վոր ամեն մի թեկուզ լավ հող,
յեթե նրա վրա յերկտր տարիներ իրար հե-
տեփից միեկուն ըույսերն ենք ցանում,
դրանից բերքը տարեց տարի պակասում
է: Դրան անվանում են մեղանում «հողի
հոգնածություն»: Սակայն իրաւրանում
հողը չի հոգնում, այլ ուղղակի պարար-
տանյութերից, վորոնք բույսին աչքան
անհրաժեշտ են—զրկվել է և բավական է,
վոր մենք աչքպիսի «հոգնած» արտերն
աղբեր կամ պարարտացներ, վոր սն-
միջապես աչք «հոգնած» արտի բերքը
նկիսի բարձրանալ:

Իսկ ինչո՞ւ: Վարովհետեւ հողը պար-
արտացներով մենք նրա մեջ ավելացնում

ենք բույսի համար անհրաժեշտ սնունդը,
իսկ չառ և լավ սնունդից բույսն ավելի
լավ է աճում, լավ է սնվում և դառնում է
ավելի զիմացկուն, դրանից է ահա ավե-
լանում է բերքը: Նույն փորձերը ցույց են
տալիս և հարյուրավոր տարիներ առա-
ջուցված գերմանական տնտեսությունե-
րում, վոր պարարտացումը բերքն ավե-
լացնում է մինչև 50 տոկոսով: Ճիշտ է մե-
ղանում, Խորհրդային Հայաստանում, չը-
նորհիվ տնտեսների քշության և վառե-
լիքի պակասության տնտեսների աղբը
զյաղացիների կողմից գրեթե ամբողջա-
պես գործադրվում է վորպես վառելիք,
բայց լավ անտես, վորն ուզում է իր հողը
պարարտացնել, նա վառելու համար վոր-
տեղ աչք հնարավոր է գործ է ածում հան-
դերից ժողոված զանազան ըույսեր, փշեր,
աչքիններից հավաքած չորուկներ, իսկ իր
տնտեսների աղբը, տնտեսության մեջ
առաջացած մոխիրը և տանը ժողոված
աղբը նա գործադրում է արտը պարար-
տացնելու համար, դրա հետեանքով աչք-
պիսի տնտեսություններից ստացած բեր-

քը շատ ավելի բարձր է լինում, քան չաղ-
րած արտերից ստացածը:

Բացի գոմաղբից վորպես պարարտու-
նյութ ծառայում են զանազան աղեր, բամ-
բակի և ուրիշ յուղապտուղների, քուսպի
ալյուրները: Հենց այս տարի մեր բամբա-
կադորժական շրջաններում բամբակի տակ
գտնված հողերի 30—35 տոկոս պարար-
տացվել են բամբակի քուսպով, վորն ա-
պահովում է բամբակի բերքի բարձրու-
ցումը 15—20 տոկոսով: Իսկ 1931 թվի
բամբակի ծրագիրը նախատեսում է Հա-
յաստանում ցանվելիք բամբակի ամբողջ
25000 հեկտարը պարարտացնել քուսպով:

դ) Լավ սերմացվի նշանակության
մասին ամեն մի գյուղացի պետք է իմա-
նա, քանի վոր գյուղական առածն ասում
է՝ «Փնչ ցանես, են կհնձես», այսինք՝ յերբ
ասողը լավ, ընտիր սերմ ես ցանում, գու-
ստանում ես նույնպիսի լավ մեծ բերք և
ընդհանրապես՝ վատ, կեղտոտ, նիհար
սերմացու գործադրելիս ստանում ես
վատավորակ բերք: Ինչ վերաբերվում է լավ
սերմի ցանելուն, բերքի բարձրացման հա-

վին, ապա փորձերը ցույց են տվել, վոր
լավընտիր սերմացուն ավելացնում է բեր-
քը՝ ամենապատ 12—15 տոկոսով:

Իսկ լավ սերմացուն հեշտությամբ
կարելի չէ ստանալ յեթե միայն մեր սեր-
մացուն մաքրենք յեղած հատուկ սերմա-
զտիչներով, վորոնք և տրիերներ են կոչ-
վում: Այդ մեքենաների միջոցով սերմի
մեջ գտնված բոլոր վատ նվազ սերմերը
գտվում են, զտվում են նաև մոլախոտերի
սերմերը և ցանելու մնում է առողջ, ծանր,
լիքր սերմերը, վորոնք ցանելուց հետո
դիմանում են յերաչափին, քամիներին, վը-
նաստառներին և հիվանդություններին
ու տալիս է մեծ բերք:

Հայաստանում կա արդեն 740 սերմա-
զտիչներ, վորոնք լրիվ բավարարում են
այս աշխարհ ցանելիք մեր ամբողջ 180000
ցեխտներ սերմացուն:

Սերմազտիչներով զտումն ապահո-
վում է 7—14 տոկոս բերքի բարձրացումը:

դ) Տեսակավոր սերմերի գործածու-
թյունը ավելի մեծ արդյունք է տալիս:
Կատարված հետազոտությունները ցույց

էն ամէլ, վոր տեսակաւոր սերմերն ցանող անտեսութեանն երբ միշտ ել 12—16 տակոսով ամէլի բերք էն ստացել քան հասարակ սերմեր ցանող անտեսութեանն երբ: Մեզ մօտ ուկրայինկա կոտակերատորի տեսակաւոր սերմերի 2 տարւա փորձերը համադրելն զյուզացիներին, վոր տեսակաւոր սերմերը սպառնում են մեծ բերք, բաժանելն է հիշեցնել, վոր Սեփանի և Լուսի տեսակաւոր սերմերն Արաւ Լիւպոմիրի հետապնդող խոտատնում են սերնդ հատ բնորոշուել ցանքերի տարածութեանը միայն թէ սպառնում են ուկրայինկայի սերմացւում համոզված լինելով տեսակաւոր սերմերի ամբողջ արդէունքի մասին:

յե) Ծարքացան մեքենաներով արած ցանքերը հակառակ շաղագանի նույնպէս բարձրացնում է բերքը նախ՝ անտեսում են սերմացուն 30—40 տակոսով և յերկրորդ՝ շարքացանով ցանած սերմերը բնականով հողի մէջ հալատար խորութեան մէջ հալատարապէս ծածկվում են հողով, երբ հալատար սնունդ և ջուր են ստանում և միտան են դուրս են գալիս հողից: Ծար-

քացանի գետնում բերքը բարձրանում է 7—14 տակոս, յերբեմն ել ամէլի մեծ տակոսով:

զ) Կանոնաւոր ցանքաշրջանառութեանը և սերմափոխութեան ամենատաճանկարգ միջոցն է բերքի բարձրացման: Փորձված է, վոր յեթե աշտանացանի համար հողը յերկու յերեք մասի խորութեան վարել են ամառ և ապա աշտան սկզբին նույն արտը նորից վարել են խորն ու հետո ցանել, դրանից բերքն ամէլացել է 15—20 տակոսով: Իսկ յեթե գարնանացանի համար հողը վարել են աշտանն ու թողել ձյուն ու սառնամանիքի տակ և գարնան շուտ փոխել ու ցանել են, ապա գետնում բերքն ամէլացել է 30—40 տակոսով: Լավ բերք է ստացվում, յերբ ցորենը ցանում են կարտոֆիլից, առվույտից հետո, մի խոտով, յերբ փոք թէ ցորենից հետո ցորեն, կամ ալլ հացահատիկ են ցանում, ալլ ցորենից հետո արմատապտուղ (բազուկ) կամ պարարտապտուղ (կարտոֆիլ) և հետո նույն հողի վրա ցանել են հացահատիկ:

Բերքի կանոնավոր այգ փոփոխու-
թ յաւնն բառ փորոշ տարիներէ իրար յեան-
վից միեկնութեն արտում կոչվում ե ցանքա-
չըջանառություն, վորը կանոնավոր ու
արդ յունալեա յերկրագործության հիմքն
ե կազմում, աղահոսելով բարձր ե հաս-
տատուն բերք: Մի ամբողջական հողային
մասով ունենալու տեսակետից ամենից
հեշտ ե հնարավոր ցանքաչըջանառու-
թ յան կիրառելի յե խորհրդային ե կոլեկ-
տիվ անտեսություններում:

Սերմերի ախտահանումից բերքը
բարձրանում ե 3—7 տոկոսով, ազատելով
բերքը սնկային հիվանդություններից,
բաժանան ե հիշել, վոր ախտահանություն
չանցկացնելու համար այս տարի Զանդե-
գուրի ամենահացառաա Տեղ, Կոռնիձք,
Խնձորենի գյուղերը զրկվեցին իրենց բեր-
քի 60 տոկոսից: Բերքի ե Կոլեկտիվացման
որը պետք ե կազմակերպել ցուցադրական
ախտահանում մասնակից անելով գյուղա-
կան բոլոր չքավոր ե միջակ մասսաներին:

Սխրոսացումը, անասնապահական պը-
րորիմը լուծելու տեսակետից անասնա-

պահության զարգացումը պայմանավոր-
ված ե նրա կերի հարցի լուծումով: Սխրո-
սացումը, վորը տալիս ե ամենահյութալի
կեր անասուններին, պետք ե լայն կերպով
մասսայականացվի: Վաչրենի խոտերը,
կարտոֆիլի, կաղամբի մնացորդները,
բուսանների թաղերը, անտառների տե-
րակները սխրոսացման միջոցով ապահո-
վում ե անասունների կաթնատվության
բարձրացումը ե առհասարակ անասնա-
պահական միջերկրների արտադրանքի
բարձրացումը:

6. ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱ- ԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԱՐԴ- ՅՈՒՆԲՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՅՈՒՑԱԴՐՈՒՄՆ

Այս տարվա գարնանացանի ե աշնա-
նացանի պլաններով նախատեսված են
բերքի բարձրացման մի շարք միջոցներ,
վորոնք կատարված են անցյալ տարիների
համեմատությամբ ալելի մեծ չափով:
Բաժանան ե առել, վոր այս գարնանը ամ-
բողջ սերմացվի 70 տոկոսը գովել ե՝
տասնյակ հազար ցենտներնեով ալելաց-

նելով քերքը: Չի կարելի տակ և՛ վոր բո-
 քոր անտեսությունները առ հավատար կտ-
 տարել են բերքի բարձրացման միջոցնե-
 րը: Տեղ-տեղ միայն սերմն ելին դուռում,
 տեղ-տեղ չուխը հանում ելին դործածու-
 թյունից անցնելով դուխանի վարին,
 տեղ-տեղ պարարտացնում ելին կողմա-
 կերպով շարաթորյակների միջոցով,
 սղոտպործելով փողոցներից ամբողջ հա-
 վաքով մոխիրը: Կային ամբողջ շրջան-
 ներ ել, վորոնք կոնտրակտացիայի միջո-
 ցով կատարում ելին ամբողջ ազրո-ձեռ-
 նարկումների միևիմուժը: Այս միջոցա-
 ումները շոշափելի չափով բար-
 ձրացրել են այս տարվա բերքը: Առանձնապես պետք է չեղանել այս
 տարվա բամբակագործական շրջան-
 ներում կատարված ազրո-ձեռնար-
 կումների մասին, յերբ մի քանի շրջանի
 բոլոր անտեսությունները գործադրել են
 բամբակի աչնան հերկ, պարարտացում,
 շորքացան, միջնակների մշակություն,
 բամբակենու ժամանակին բժշկություն
 և այլն: Արդեն այդ ձեռնարկումների

հետեվները տեսնվում է, այդ շրջաննե-
 րում սղոտվում է բամբակի ափելի մեծ
 բերք, քան այն շրջաններում, վորտեղ
 չի կատարված ազրո-ձեռնարկումների
 խմբավորում:

Բերքի բարձրացման համար գործա-
 դրված ազրո-ձեռնարկումներն ափելի
 հաջող կազմակերպել են մեր կոլեկտիվ
 անտեսությունները, վորոնք ունենալով
 միացած հոգային մեծ ամբողջություն,
 արտի փոխարեն գործադրել են արակ-
 տոքներ: Նրանք առանձնապես կոռվա և
 ջանդեղության շրջաններում իրենց միաց-
 րած և պետական սմանդակությամբ ձեռք
 բերած յեղներով կարողացել են 6--7
 գույք լծելով արորը գուրս քչել փոխարի-
 նելով դուխանի: Նրանք իրենց ունեցած
 և փոկերի սերմադրանքներով 100 տոկոսով
 զանել են սերմացուները: Այլքիների ու
 բամբակի բուժումն զաշտային շրջաննե-
 րում ամենից հաջող կատարեցին կոլեկ-
 տիվ անտեսությունները: Բամբակի շոր-
 քացանք և միջնակների մշակումը առա-
 ջին հերթին կատարել են կոլտնտեսու-

թյունները, ցուցադրական որինակ հան-
գիստնալով անհատական և չքավոր և մի-
ջակ անտեսություններին: Այնպիսի կոլ-
տնտեսություններ, ինչպես Նոր-Բայազե-
դինը, Ախտաշինը, Յելզովանինն, իրենց
բերքը կալսել են բարդ կալսիչ մեքենա-
ներով, որական կալսելով 1000—1200
խուրձ, հակառակ անհատական չքավոր և
միջակ անտեսություններին, վորոնք աթ-
րոջը ընտանիքով աշխատելով մեկ տեղ
իրենց ունեցած կամերով որական կալսել
են 100—150 խուրձ միայն:

Այնպիսի կոլտնտեսություններ, ինչ-
պես Շիկահոզինը, Տաթևի, Ճակատեն,
տառնյակ վերատերով ճանապարհներ և
նոր տուններ են գցել, հազարավոր դույլ
տարողությամբ ջրամբարներ չինել, նո-
րոգել հանգամիջի ճանապարհները, նոր
կամուրջներ պատրաստել: Ճակատենի
կոլխոզը սեփական միջոցներով փորձա-
դաշտեր և կազմակերպել: Այս բոլոր մի-
ջոցները գործադրվել են, ինչպես կոլ-
խոզներին, այնպես անհատական չքավոր
և միջակ անտեսություններին կողմից

բերքի բարձրացման համար, իսկ այդ
միջոցառումների գործադրումը ապահո-
վել է կոլտնտեսություններում այնպիսի
բերք, վոր նրանք իրենց տարվա պաշարն
ունենալով մեկտեղ, հացամթերման ա-
ռաջին գիրքերում են յեղել, կոտպեա-
ցիային հանձնելով հազարավոր ցենտներ
ցորեն, գարի, խոտ, միրգ, բանջարեղեն
ու պետք է հանձնեն հարյուրավոր տոնն
բամբակ, խաղող, ծխախոտ, կարտոֆիլ
և այլն: Կոլեկտիվ անտեսություններին
բերքն ապահովելով յուր անդամներին,
տրդեն ապացուցել է նրա մեջ մտած մի-
ջակ-չքավոր գյուղացիներին, վոր իրենց
նշերը կոլեկտիվ տնտեսության մեջ ա-
վելի մեծ բաժին են ստացել, քան անհա-
տական տնտեսության մեջ յեղած ժամա-
նակ:

Բերքի և կոլեկտիվացման ուրը, խոր-
հրդային և կոլտնտեսությունները պետք
է դուրս գան այդ որվա առթիվ կազմա-
կերպված ցուցահանդեսներում, ցուցա-
դրեն իրենց բերքը և ապացուցեն խորհ-
և կոլ. տնտեսություններին առավելու-

թյուններն անհատական տնտեսություն-
ների համեմատությամբ:

Կոլտնտեսությունները պետք է ամե-
նայեռուն մասնակցությունը ցույց տան
չթանալին և յենթաչրջանալին կենտրոն-
ներում: Կազմակերպվելիք ցուցահանդես-
ներին: Այդ ցուցահանդեսներում խորհ-
տնտեսությունների հետ մեկտեղ, նրանք
կազմակերպված ձևով պետք է ցուցահա-
նեն իրենց կոլեկտիվ աշխատանքի ար-
դյունքի, բամբակի, ցորենի կաթնատու-
կովների, լավ հորթների, թռչունների, մեղ-
քի, խաղողի, կաղամբի, կարտոֆիլի և
այլն մթերքների լավագույն նմուշները:

Բացի նմուշները ցուցադրելուց, ա-
ռանձին դիտարմաներով և բացառա-
կաններով պետք է պարզել, թե այդ մը-
թերքներն ստանալու համար ինչ աշխա-
տանք և միջոցներ է գործադրված, քանի
քանվորական որ-ձախոսվել նրանց ստանա-
լու աշխատանքների վրա, ինչպես է մշակ-
վել հողը, ինչպես է խնամվել բույսը,
ինչքան խնայողություն է յեղել աշխա-
տանքի օրերի մեջ, ինչպես է կազմա-

կերպված յեղել այդ աշխատանքը, ինչ-
պես են կազմակերպել արդյունքի ապա-
ռումը և բաշխումը, վորքան վարկ են բա-
տացել, ինչ նախատևների համար, ինչ-
պես են գործադրվել այդ վարկերը: Այդ
դիտարմաներում պետք է ցույց տալ մե-
քենաների ու գործիքների խնամքը, աը-
րակտրոնների աշխատանքը, նրանց վարի
ինքնարժեքը, չարքացանների, սերմադը-
տիչների աշխատած օրերը, նրանցից բա-
տացված արդյունքը, նրանց աշխատան-
քի արտադրողականության չափն անցյալ
տարվա համեմատությամբ և այլն: Աը-
բանք խնդիրներ են, վորոնց ցուցադրելիս
խորհրդային և Կոլտնտեսությունների
կողմից կապացույցվի դյուղի սոցիալիս-
տական սեկտորի, դյուղի յերկրադործու-
թյան կոլեկտիվ ձևի առավելությունները
անհատական տնտեսությունների համե-
մատությամբ: Այդպիսով կարագացվի
այն նոր շարժումը, վորն սկսվել է գեպի
Կոլտնտեսությունները, սպահովելով կո-
լեկտիվ տնտեսությունների հետագա տըն-
տեսական և տեխնիկական բազայի դար-
գացումը:

**7. ԲԵՐԲԻ ՅԵՎ ԿՈՆԵԿՏԻՎԱՅՄԱՆ ՈՐԸ
ՊԵՏԲ Ե ԼԱՅՆ ԾԱՎԱԼԵԼ ԻՆԲՆԱԲՆՆԱ-
ԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԱՅՆԵԼ ԲԱՅԵՐԸ
ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Իւրքի և կոնկրետացման ուրը միա-
ժամանակ լալն ինքնաքննադատության
պետք է յենթարկի գլուղատնտեսության
գարգացման խնդիրների թույլ կողմերը:
Վորովհետեւ իսկական ինքնաքննադատու-
թյունը մեր բացերի, դա ապուցույց է
մաստնների մասնակցության գլուղատն-
տեսական գարգացման առաջադրած խն-
դիրների, դա գլուղի սոցիալիստական
փերականուցման գործի փարոսն է: Գլու-
ղի կոլտնտեսությունների, խորհանտե-
սությունների և փերականուցման լծված
գլուղի ալլ կազմակերպությունների ըն-
թացիկ տարում ձեռք բերած հաջողու-
թյունների հետ կան և մի շարք բացեր,
վորոնց վերացումն առողջ ինքնաքննա-
դատության ճանապարհով կապահովի
կոլտնտեսությունների գարգացումը, նրա
աճման նոր ալիքը:

Ամենից առաջ աշխատանքի կազմա-
կերպման գործը, վորը հիմնական միջոցն
է կոլտնտեսությունների աշխատանքի
արտադրողականության բարձրացման և
արտադրանքի ավելացման, չնայած անց-
յալ տարիների համեմատությամբ ունե-
ցած անհամեմատելի հաջողությունների,
այնուամենայնիվ, շատ տեղերում այդ
այդ աշխատանքի կազմակերպումը չի
դրված իր բարձրության վրա, աշխատան-
քը չի կազմակերպված դործարքային ձե-
վով, վորը ապահովեր աշխատանքի դիս-
ցիպլինան, արտադրողականության բարձ-
րացումը, գլուղատնտեսության ճյուղի
մասնագիտացումը:

Աշխատանքի հաշվառում և հաշվա-
պահություն: «Սոցիալիզմը դա հաշվա-
ռումն է», ասել է մեր մեծ ուսուցիչ ընկ.
Լենինը և իսկապես այն կոլտնտեսու-
թյունները, վորոնց ղեկավարները լավ
հիմքերի վրա յեն դրել հաշվառումն և
հաշվապահությունը, ապա ալլպիսի կոլ-
տնտեսությունները լավ հիմքերի վրա յեն
դրված: Չնայած այս տարի ձմեռը կոլ-

տնտիկենտրոնը և տեղական մարմինները, հարյուրավոր հաշվապահներ պատրաստեցին այդ նույն կոլխոզնիկներին, այնուամենայնիվ դեռ կան շատ կոլխոզներ, վորոնց մոտ հաշվառման և հաշվապահության բացակայությունը, կամ հաշվապահների անվորակ դրությունը, չի նպաստում նրանց տնտեսության զարգացման:

Աշխատանքի դիսցիպլինայի տեսակետից կարելի չե ասել, վոր դեռ շատ կոլխոզներում աշխատանքի գործարքային ձևի բացակայության, վարձատրությունը ըստ աշխատանքի վորակի ու քանակի սկզբունքի չգործադրելն ստեղծում և աշխատանքի դիսցիպլինայի անկում: Կան կոլխոզներ ել, վորոնց մեջ գտնվում են կոլխոզնիկներ, վորոնք աշխատում են գլխիս պահել, խուսափել աշխատանքից, դանազան պատճառաբանություններով ուշանալ աշխատանքից, աշխատանքի ընթացքում անփութ վերաբերմունքով վրնաետ աշխատանքին, ջարդել գյուղգործիքները և այլն, խախտելով աշխատանքի դիսցիպլինան: Բերքի և կոլեկտիվացման

որը հրապարակ պետք է հանվեն նրանք, վորոնք գիտակցաբար, թե անգիտակցաբար խախտելով աշխատանքի դիսցիպլինան վտանգում են կոլտնտեսության արտադրությունը:

Կոլտնտեսության բացերից է նաև այն, վոր հաճախ տնտեսությունը վարվում է անձրագրային ձևով. անցյալում կոլտնտեսություններում արտադրական ծրագրերի միայն 23 տոկոսն է մասսայականացրվել: Պլանը, վորը հիմքն է կոլտնտեսության մասնագիտացման, նրա տարբեր ճյուղերի համաձայնեցրած զարգացման, բանվորական ձեռքերի և գյուղգործիքների ուսցիոնալ ոգտագործության, շատ անգամ կոլխոզմասաների սեփականություն չի դառնում, նրա մասին իմանում է նախագահը կամ շատ ու շատ կոլեկտիվի վարչությունը:

Վերջապես բերքի և կոլեկտիվացման որը պետք է խարաղանել մի շարք կոլխոզների և նրանց առանձին անգամների գլխողականությունը, վորոնց կոլեկտիվ տնտեսությունների ապագա զարգացումը

մասնավորապես, իսկ սոցիալիստական շինարարութեան գործը, ընդհանրապես՝ չպատկերացնելով, կամ պատկերացնելով շատ ազոտ կերպով, աշխատում են ամբողջ կոլտնտեսութեան արտադրանքը գլպել, բաժանել անդամների անհատական սեկտորին՝ սպառելու նպատակով, հաշվի չառնելով կոլխոզի հանրայնացված մասի աճման առավելութունները:

8. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սոցմրցումը և հարվածայնութիւնը այն առաջնակարգ միջոցներն են, վորոնք կբարձրացնեն խորհ. և կոլտնտեսութիւնների աշխատանքի արտադրողականութիւնը ու դիսցիպլինան, այդ տեսակետից ել սոցմրցման և հարվածայնութեան առաջին շարքերում պետք է կանգնած լինեն խորհ. և կոլտնտեսութիւնները, վորպէս հասարակական այնպիսի կազմակերպութիւններ, վորոնք կոչված են իրագործելու իրենց աշխատանքները դյուղի սոցիալիստական շինարարութեան առաջ-

րիկում: Ամենից լավ և շուտ վարը, տեսակավոր սերմացվի դործածումը, շորքացանը, պարարտացումը, աշխատանքների նպատակահարմար գործածութիւնը, սիլոսացման գործի կազմակերպումը, նոր գոմերի և մարագների կառուցումը, մեծ բերքը և նրա ավելցուկները պետութեան հացամթերման գործին հատկացնելը՝ ահա սոցմրցման և հարվածայնութեան այն խնդիրները, վորոնք պետք է մեր խորհ. կոլ. և անհատական չքավոր և միջակ տնտեսութիւններն իրար հետ մրցելու առարկաներ դառնան: Մեծ նշանակութիւն ունի սոցմրցման և հարվածայնութեան տեսակետից կանոնավոր հաշվառում և հաշվապահութեան կազմակերպումը, արտադրական պլանների 100 տոկոսով յուրացումը, գյուղատնտեսական մեքենաների և գործիքների լավագույն կերպով և լրիվ բեռնվածութեամբ ոգտագործելը և լավ վիճակում պահելը, առուների, ճանապարհների, կամուրջների նորոգութիւնը, կարկտի, հեղեղի, հիվանդութիւնների և վնասատուների դեմ

պայքարի կաղժակերպումը և այլն։ Այս
որինակ սոցմըցությունը և հարվածաշ-
նությունը պետք է կաղժակերպեն վոչ թե
մի խորհ. և կոլտնտեսություն, հարեան
խորհ. և կոլտնտեսության հետ, այլ մի
չըջանի խորհ. և կոլտնտեսությունները,
մյուս չըջանի խորհ. և կոլտնտեսություն-
ների հետ, մի գյուղը հարեան գյուղի
հետ, մի չըջանի կոոպերատիվ միություն
մյուս չըջանի կոոպերատիվ միության
հետ։ Այսպիսով սոցմըցումը և հարվա-
ծաշնությունը յայն հրապարակ և բացում
խորհ., կոլտնտեսությունների և չքավոր
ու միջակ մասսաների առաջ գյուղատն-
տեսության և աշխատանքի բոլոր բնագա-
վառներում, հրապարակ բերելու իրենց
կամքը, վճռողականությունը, աշխատու-
նակությունը, սպառման և մթերման աշ-
խատանքները, տեխնիկական կատարելա-
գործումները, նոր կենցաղի, շինարարու-
թյան, կուլտուրայի, առողջապահա-
կան հարցերը, վերոնք ի մի առած սոց-
մըցման և հարվածաշնության ելությու-
նը պիտի հանդիսանան։ Այս խնդիրներ

չուրջը շատ ու շատ խորհ. և կոլտնտեսու-
թյուններ առանձին-առանձին, կոոպերա-
տիվ կաղժակերպություններ և գյուղեր
կնքած ունենալ այս բնթացիկ տարում սոց-
մըցման և հարվածաշնության պայմա-
նագրեր։ Բերքի և կոլեկտիվացման որն
այդ պայմանագրերը պետք է ստուգվեն
և մասսայականացվեն, նրանց միջոցով
ստացված հաջողությունները պետք է ա-
ռանձին դիտարկմաներով ցուցադրվեն
չըջանային և յենթաչըջանային ցուցա-
հանդեսներում։ Միաժամանակ այդ որը
սոցմըցման և հարվածաշնության կարգով
կոլտնտեսությունները պետք է կաղժա-
կերպեն չաբաթորյակներ, իրենց լծկան-
ներով և գյուղգործիքներով ոգնության
գալու անհատական չքավոր և միջակ
տնտեսություններին տեխնիկական կուլ-
տուրաների (բամբակ, ծխախոտ, խաղող)
բերահավաքի և աշխատանքանի կատար-
ման գործում՝ այդպիսով մի անգամ ևս
տողացուցելով դուրի կոլեկտիվացման
առավելությունները։

9. «ՀՆԳԱՄՅԱԿԸ ՀՈՐՍ ՏԱՐՈՒՄ» ՓՈԽ- ՌՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ

Իերֆի և Կոլեկտիվացման ուրը, պետք է գրվի և մի այլ կարեւոր խնդիր, դա հնգամյակը չորս տարում փոխառության իրացման խնդիրն է: Բանն այն է, վոր կոմկուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգը դաշնակցած գյուղի բատրակ, չքավոր և միջակ մասսաների հետ հաջողությամբ վերակառուցում են մեր տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով: Այս վերակառուցումն արտահայտվում է մեր հնգամյա մեծ պլանի մեջ: Սոցիալիստական շինարարության հաջողությունները Փարբիկաների ու գործարանների համար ստանդիններ ու մեքենաներ արտադրելու մեծ աճում են տալիս, հնարավորություն են տալիս գյուղատնտեսությունը մեքենաներով ապահովելու և բարելավելու, վորն զգալիորեն կթեթեւացնի գյուղացու աշխատանքը, կբարձրացնի գյուղատնտեսության բերքատվությունը: Այս նպատակին է ծառայում բո-

լոր տեսակի փոխառությունների շարքին և հնգամյակը չորս տարում: Այս փոխառություններից ստացված վարկերով ամրանում են և զարգանում կոլտնտեսությունները, նրանց աշնանացանի և դաշնանացանի համար, նոր կառուցումների և մեքենաների համար տարեկան տասնյակ միլիոններ է հատկացվում: Միայն ընթացիկ տարում խորհ. և կոլտնտեսությունների շինարարության համար բաց է թողնվել հինգ հարյուր միլիոն ուրբլի: Գյուղատնտեսության համար այս հնգամյակում պետք է կառուցվեն կոմբայնի և արակտորի նորանոր գործարաններ: Միայն գյուղատնտեսական գործիքների համար գյուղ է մտնելու յերկու հազար հինգ հարյուր միլիոն ուրբլի: Յերկրի խնդուսարացման և գյուղատնտեսության այս վերակառուցումը հնարավոր չէ առանց բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ջերմ աջակցության:

Այս տեսակետից գյուղի բոլոր հասարակական կազմակերպությունները, ԼԿՅԵՄ-ը, ՊԱՋԸ-Ավիաբեմբ, ՄՈՊՐ-ը,

գյուղական ագրոնոմները և ուսուցիչները պետք է կազմակերպեն լայն կամայանիա ուղիավիտական վերակառուցման գործում գյուղացիական միջոցների մոբիլիզացիայի շուրջը: Հայաստանի բնակիչների պրակտիկական լրիվ և ժամանակին ավարտումը, միասնակի գանձումն ապահովելով քաղաքի բանվորութան հացով և այլ կենսամթերքներով արագացնում են գյուղատնտեսութան մեքենայացումը, նրա բերքի բարձրացումը: Բերքի և կուլեկտիվացման ուրը, յուրաքանչյուր կոլխոզ, կոլխոզի յուրաքանչյուր անդամ, յուրաքանչյուր չքավոր և միջակ գյուղացի պետք է իրացնեն «հնգամյակը չորս տարում» փոխառությունը, նամանավանդ, վոր այդ նպատակով ծախսված գումարները լավագույն խնայողություններ են:

10. 1930—31 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՅՈՒՄԸ

Բերքի և կուլեկտիվացման ուղիա ուսանակարգ խնդիրներինց մեկը պետք է լինի բամբակի 30 և 31 թվի ծրագրի ի-

րացման մասնաշաղկանացումը դաշտային շրջաններում: Բանն այն է, վոր դաշտային շրջաններում մոտակա տարիներում հիմնական և առաջնակարգ կուլտուրան հանդիսանալու յե բամբակը: Նա պետք է գուրս վանի մնացած կուլտուրաներն այն բոլոր հողամասերինց, վորտեղ բամբակը լավ է աճում: 1931 թվի ծրագրով նախատեսված 25.000 հեկտար տարածության իրացումը խոշոր քաղաքական և տնտեսական նշանակություն է ստանում մեր մանվածային արդյունաբերությունը հում նյութով ապահովելու և արդյունաբերական ապրանքների պակասը մեղմացնելու տեսակետինց: Բամբակագործական շրջաններում յեղած 53—54 հազար հեկտար պիտանի հողերը լրիվ ապահովում են 25 հազար հեկտար տարածությունը: Կիրառելով աշնան և գարնան առուների վերանորոգումը, գարնան և ձմրան արատները, բամբակի 24 ժամյա ջրելու սխիսեմը, անգամ ջրառակով վեզիի և վաղապատի շրջաններում այդ տարածությունն ապահոված կլինի ջրային ռեսուրսների տեսա-

կետից: Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել գարնան և ձմռան արատների վրա, վորոնք մեծ խոնավություն ամբարեկով մեկտեղ նպաստում են և պարտաքման:

Բամբակի 25.000 հեկտար տարածության հետ, նրա բերքի բարձրացման խնդիրները բերքի և կոլեկտիվացման որվա առթիվ հրավիրված դասախոսությունների և զրույցների նյութ պետք է դառնան: Արդեն համապատասխան մարմինների կողմից ապահովված է 25.000 հեկտար տարածության վրա լրիվ ագրո-կոմպլեքսի կիրառումը, դա նշանակում է, վոր բամբակի ամբողջ տարածության վրա կիրառվելու յե ագրո սլարդ ձեռնարկումներ, ինչպես աշնան վարը, քուսպով և այլ հանքային նյութերով պարարտացումը, չարքացան, կուլտիվացիա և կազմակերպված չանաք:

Առանձնապես բերքի և կոլեկտիվացման սրբ խորհ., կոլ., անհատ չք. և միջակ տնտեսությունների ուշադրությունները պետք է կենտրոնացնել աշնան վարի 14

հազար հեկտար տարածության իրացման վրա: Այդ նպատակով լրիվ ոգտագործելով խորհ., կոլ. և չքավոր ու միջակ տնտեսությունների արտադրական ուժերը, հատկապես Ղամբուլի գյուղացիությունը պետք է մասնակցի Ուլուխանլիում նոր կառուցվելիք մեքենատրակտորային կայանի աշխատանքներին, Ժամանակին մոբիլիզացիայի յենթարկելով բամբակացանների միջոցներից 60.000 ուրլի ալգպիսով ապահովելով կայանին տրվելիք տրակտորների ամբողջ քանակը:

Գյուղի մատայական կազմակերպությունները, ինչպես ԼԿՅՆՄ, ՊԱԶԸ-Ավիաքիմը, ՄՈՊՐ-ը, կանանց կազմակերպություններն իրենց բոլոր անդամներին պետք է համախմբեն բերքի և կոլեկտիվացման որվա խնդիրների շուրջը: Շրջանային և յենթաշրջանային ցուցահանդեսների լավագույն կազմակերպողները պետք է հանդիսանան ԼԿՅՆՄ-ի անդամները: Նրանց աշխատանքների առանցքը պետք է կազմի կոլեկտիվացման նոր թափի կազմակերպումն: Նրանք պետք է կազմակեր-

պեն իրենց անդամների ընդունելություն-
 ները. կոլտնտեսություններում, նրանց
 աշխատանքների մեջ պետք է մտնի սո-
 ցիալիստական մրցման և հարվածաշնու-
 թյան նոր պայմանագրերի կնքումը և ըն-
 թացիկ տարում կնքվածների ստուգումը
 և մասսայականացումը: Հասարակական
 կազմակերպությունների առանձին ան-
 դամները, ինչպես կոլխոզում, այնպես և
 կոլխոզից դուրս իրենց բավազույն աշխա-
 տանքների և բերքի բարձրացման միջոց-
 ների գործադրման համար պետք է մրցա-
 նակ ստանան իրենց կազմակերպություն-
 ների կողմից: Կարմիր արեգիկների միջոցով
 պետք է գնման կայանները անդափոխել
 հավաքված հազահատիկի, բամբակի,
 խաղողի և այլ արտադրանքների:



ՀՀ Ազգային գրադարան



NL0210502

29.732

604